



**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՋՐԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔ**

01.01.2015թ. – 31.08.2015թ համայնքի ղեկավարի կողմից կատարված
աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՋՐԱԲԵՐ 2015թ.

Հարգելի Ջրաբերցիներ 2015թ ութ ամիսների ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

➤ **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

2014 թ. դեկտեմբերի 29-ին համայնքի ավագանին իր N34-Ն որոշմամբ ընդունել է 2015 թվականի բյուջեն, ըստ որի եկամուտները և ծախսերը կազմել են 16 մլն 519 հազար 500 դրամ: Հողի հարկի չափը Ջրաբերի վարչական տարածքում գտնվող հողերի համար ըստ նախահաշվի 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2015 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ կազմել է 600.0 դրամ, գույքային հարկերի համար՝ 380 հազար դրամ:

.. 2015 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ հողի հարկը հավաքագրվել է 553 հազար 800 դրամ որը կազմում է 92,3%:

.. 2015 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ գույքային հարկերը հավաքագրվել են 208%-ով, որը բացարձակ թվով կազմել է 790 հազար 530 դրամ:

➤ **ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ**

Հսկողություն է իրականացվում առևտրի, հանրային սննդի ոլորտներում գործող օբյեկտների նկատմամբ: Տրվել են ծխախոտի և ռգելից խմիչքի վաճառքի և իրացման 4 թույլտվություն, որոնցից գանձվել են համապատասխան տուրքի գումարները:

➤ **ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Ընթացքի մեջ են Ջրաբեր գյուղի գլխավոր հատակագծի կազմման աշխատանքները: